


Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



յի մէջ Այտընեան Աբբա՛հօր շունչը կար,
որուն իմաստուն առաջնորդութեան տակ՝
Հ.Գ. Գալէմբեարեան, Հ.Գ. Մէնէլիշեան
եւ մանաւանդ Հ. Յակոբոս Տաշեան բա-
տեղծած էին բանասիրական, հայազի-
տական եւ պատմական խոշոր կեղերն մը:
Պատանի Գարբրէէլը պէտք էր զբառազան-
ներու վրայ կատարել նախնական ուսում-
ները. սակայն ուշիմ եւ հետաքրքիր նը-
կարագրով, յաճախ իր սթեերէն վեր աշ-
խատանքներու կ'ուզէր լծուիլ եւ հետե-
ւիլ, բարի նախանձով, մեծերուն զծած
ուզիրն: Զանազ ուսանիլ արեւելեան լե-
զուները, մասնաւորապէս յունարէնը.
կարծես թէ պատանի Գարբրէէլը ծրարի
զբաժ էր իր առջեւ բանալ զիտական ըն-
դարձակ հորիզոն մը:

Զինքն ամէնէն աւելի հմայողը Տաշեան
կ'ըլլայ, որուն զործերը անյաղ տենչով
կը կարգայ եւ հետզհետէ իր երիտասարդ
հոգին կը թրծուի զխտական տուեալնե-
րով: ապաղայ բանասէրը կը կերտուի:

Հ. Ակիրեան 1907ին բարձրանալով քահանայական սուրբ աստիճանին՝ կը մտնէ զործնական կեանքի մէջ. արդէն ուսանողութեան շրջանին՝ ընթերցումներով, զեռնական ուսումնասիրութիւններով համապատասխան էր բանասիրական, պատմական եւ մատենագրական ճիւղերուն մէջ. կադմած էր իրեն ապագայ ուսումնէրուն կարեւոր առարկէր եւ կրնար առարկէր ելլել արտադրելու համար:

Տակաւին երիտասարդ քահանայ, ոչ միայն վանքին մէջ զաստիճասութեան պաշտօն կը ստանայ իր սիրած նիւթերն աւանդելու, այլ իրեն կը յանձնեն Համդէս ամսօրեայի խմբադրութիւնը. կարելի է բակ թէ մինչեւ մահը վարեց այդ կարեւոր պաշտօնը՝ իր շուրջ խմբելով երիտասարդ սերունդը՝ առաջնորդելու հա-

Վրեհնայի Մխիթարեան քոյր Միաբանութիւնը Հոկտեմբեր 23ին կուսնցուց իր բազմապատակ եւ արդիւնաշատ անդամներէն մէկը՝ Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեանը։ Անխոջ աշխատող, հետեւող Տաշեանի բանասիրական ուղղութեան, Ակիւնեան կէս դարէն աւելի գրաւեց Վրեհնայի Հայրերուն բանասիրական առաջնութիւնը։

Իր ծննդավայրն եղաւ Արդուին հայա-
շատ քաղաքը, 1883ին. հոն անցուց իր
մանկութիւնը՝ ունեւոր ընտանիքի մը
մէջ: Իր աւագանի անունը Գարրիէլ էր:
Բարեպաշտ մայր մ'ունենալով, Գարրիէլ
կը հետեւի կրօնական ուղղութեան, կը
սիրէ եկեղեցին եւ ցոյց կու տայ քահա-
նայական կոչում: 1895ին իր փափաքը կը
կատարուի հասնելով Վիեննա, անգամա-
դրուելու Միխիթարեան Միաբանութեան:
Իր ուսանողութեան շրջանին՝ Վիեննա-

մարդիկ պիտի բանասիրական և պատմական
դիտարկվեն:

Ի՞նչ սրտին մօտ էր նոր սերունդը, և կարելի է ըսել՝ թէ՛ հեանքին ջերմ օրերը նուիրեց աչակերտաներուն, նախ իրր փոխ տեսուչ, ապա տեսուչ կղերանոցին :

Սիրահար գիրքերու եւ անյայտ ընթերցող, իր լուսավոյն ժամերը պիտի անցընէր վանքի մատենադարանին մէջ, զայն ճոխացնելու, դատաւորելու թէ՛ գիրքերու, թէ՛ լրացիր-սպարբերականներու հաւաքածոները: Իր բազմաթիւ ճամբորդութիւններու ժամանակ, Արեւելք եւ Եւրոպա կամ Հայաստան, միակ փափաքն ու ջանքն եղած է գիրքեր, լրացիր, ամսաթերթեր փնտռել, կամ ձեռագիրներ հաւաքել մատենադարանին համար:

Գեո երիտասարդ քահանայ, 1912ին, առաջին համբարդութիւնը կը կատարէ զէպիւ Արդուին, ծնողքին տեսութեան. իր սրտին մօտ էին Հայաստանի սրբալիայրբը. կը փութայ էջմիածին, Գառնի, Գեղարդ եւ ապա Անի, ուր Ն. Մառ պեղումներ կը կատարէր: Երկիւղած կարօտով կը համբարէ մեր հնազարեան սրբալիայրբերը, բայց իր զլխաւոր երազն էր նորանոր ձեռադիրներ հաւաքել կամ օրինան կել՝ վանքի մատենադարանին համար, եւ առատ հունձքով կը զառնայ Վիեննա:

Արդէն առաջին համաշխարհային պատերազմը ծագած էր, սահմանները փակ, ազդ ազդի թշնամի. եւ Ալեքսեան փակուած վանքին մէջ, կը նուիրուի մատենադրական ուսումներու: Հանդէս Ամսօրեան առժամացէս փակուած էր. աւելի ազատ էր խորանալու մատենադիտական եւ բանասիրական պրպտումներու մէջ:

Յաւալի ժամանակներ էին, իր սիրելի ծննդավայրը կրակի եւ սուրի տակ էր, իր սիրելիները ջարդուած եւ տարալիւր սրտին մէջ կսկիծ, ձեռքին մէջ գրիչ, հին ձեռագիրներու մէջ մխիթարանք փնտռեց։

Այդ շրջանին էր որ նա գրեց 1230-1400-
հաջ մատենադրութեան պատմութիւնը, որ
եր մեծ ծրարուն մէկ փոքրիկ մասը կա-
րելի էր համարել:

Անշուշտ մեծ պահանս մը պրտոր լլլալ

այդ կոթողական դործին մէջ՝ «Էթէ չկա-
րենալ օգտուիլ Հայաստանի ձեռագրական
հսկայ հաւաքածոյէն»։ Այդ ուղղութեամբ
բախտը կը ժպտի իրեն։ Ա. Միսսնիկեանի
հրամանին վրայ՝ կը յաջողի անցնիլ Ե-
րևան, ուր իր տրամադրութեան տակ կը
գրուին շուրջ 7000 ձեռագիրներ։ Հոն իրր
պետական նպաստընկալ պաշտօնեայ,
անխոնջ կ'աշխատի ցուցակագրելի՝ ի հա-
շիւ կառավարութեան՝ շուրջ 4000 ձեռա-
գիրը, դառնալով 1923-1928ի շրջանին՝
պետական մոտենադարանի, կարելի է Ը-
սկէ միակ բանասիրական աշխատողը։

Դժբախտաբար զոհ կ'երթայ զրպար-
առութիւններու . կը խուզարկեն իր աղքա-
տիկ բնակարանը, զինքը կը ձերբակալեն
և 40 օր բանտ կը մնայ, մինչև ե որ Մոս-
կուայէն ազատութեան եւ արտաքսման
հրաման կ'իյլէ . կը գտնայ Վիեննա . այս
անգամ՝ առանց իր աշխատանքներէն նը-
մոյձ մը հետը տանելու : Բայց ան սրտով
աշխատած էր ազգային ձեռագրական
հարստութիւնը լուսարանելու, ցուցակա-
դրելու եւ հանրութեան սեփականութիւն
դարձնելու համար :

Անհանդարտ էր, իր երազին էր աչքի
անցրել Եւրոպայի ամէն մէկ անկիւն՝
հայ ձեռագիր մը գտնելու եւ ուսումնա-
սիրելու համար: Դարձեալ կը ճամբորդէ
Գերմանիա, Ֆրանսա, Իտալիա, Նիւթեր
հաւաքելու համար: Եթէ Հայաստանի
մէջ կարելի չեղաւ ամբողջացնել ձեռ-
գրական աշխատանքը, իր աչքին առջեւ
էր Եւրոստղէմի հաւաքածոն, նոր Զու-
րան:

Գարձեալ ճամբայ կ'ելլէ դէպի Մերձաւոր Արեւելք, համաշխարհային երկրորդ պատերազմի ճիշտ նախօրեակին, 1939ին։ Երկրորդ պատերազմը ծագեցաւ և Հ. Ալկինեան ըանձուած մնաց Պէյրութի մէջ։ Անցաւ Երուսաղէմ, ուր հազիւ կարելի եղաւ տպագիր հնութիւններ ուսումնասիրել։

Նոր Զուգա հետև մնաց · բայց այդ ան-
խոնջ մշակը պարտադ չմնաց, որքան մի-
ջոցները կը ներկին՝ դրապեցու իր սերե-
լի նիւթերով եւ գլխուով աշխատակիցն

